


Handwritten text in a stylized, blocky font, possibly representing a name or a signature. The characters are dark gray and appear to be arranged in a single line.

# Վահան Իշխանյան



ՎԵՊ



ԵՐԵՎԱՆ  
2023

ՀՏԴ 821.19-31 Իշխանյան  
ԳՄԴ 84(5Ը)-44  
Ի 684

Ի 684 Իշխանյան Վահան  
Դառը ծով: Վեպ / Վ. Իշխանյան.- Եր.: Newmag, 2023.- 336 էջ:

Այս գիրքը մեկ այլ գրքի շնորհանդեսի սրճարանից ճամփորդության է տանում ժամանակի ու տարածության միջով, հանդիպեցնում հարյուրավոր կերպարների՝ պատերազմող Չեչնիայից մինչև խորհրդային հերթերով ապրող Մոսկվա ու Հնդկաստանի ձրի Գոկառնա, Կաունասի թանգարանի սատանաներից մինչև միասեռական հարսանիք Երևանում, Մոնրեալի՝ սփյուռքահայերի սիրած սուպերմարկետ «Կոսկո»-ից մինչև Երևանի «ՍԱՍ» սուպերմարկետ, ԿԳԲ-ական հարցաքննություններից մինչև անկախ Հայաստանի ԱԱԾ խուզարկումներ, Հայոց ցեղասպանությունից մինչև դուրլինյան իրավապաշտպան կոնֆերանս, խորհրդային պիոներական ճամբարներից մինչև գերմանական համակենտրոնացման ճամբարներ, մազերին մկրատ չդիպած իրինդցի տատիկից մինչև հինդուիստական ծեսով պսակվող, առաջին արցախյանի մասնակից ռեժիսոր, սփյուռքահայ ուսանողների հանրակացարանից մինչև Բաքվից փախստականների հանրակացարան... Ի՞նչ կախարդական գորգով է հնարավոր նման աշխարհագրություն:

ՀՏԴ 821.19-31 Իշխանյան  
ԳՄԴ 84(5Ը)-44

ISBN 978-9939-884-94-3  
Վահան Իշխանյան «Դառը ծով» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ  
Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:  
Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի իրավահաջորդների հետ կնքված պայմանագրով:



**2գուշացում ծնողներին. գրքում կան հայհոյանքներ:**

*И в суете тебя сняли с креста,  
и воскресенья не будет.*

*Булат Окуджава*

*Հինը մեռնում է, բայց նորը դեռ չի ծնվել.  
այդ միջթագավորությունում  
հրեշներ են ծնվում:*

*Գրամշի*

«Թյուր համոզմունք կա, թե 1917-ի Հոկտեմբերյան հեղափոխությունը պրոլետարական չէր, որ բուլշևիկյան հեղաշրջում էր:

Ես էլ էի տենց համոզված, բայց որ սկսեցի թեզիս վրա աշխատել, ուսումնասիրել արխիվները, աչքիս առաջ պատկերը սկսեց փոխվել, լրիվ այլ բան բացահայտվեց»:

Դավիթ Մանդելի «Պետրոգրադի աշխատավորները 1917 թվի հեղափոխություններում» ֆրանսերեն գրքի շնորհանդեսն է *L'amère à boire* փաբում: Փաբի անունը ո՞նց թարգմանենք: Ֆրանսերեն բառախաղ է. որ լսելով հայերեն թարգմանես, կլինի՝ «խմել ծովը», որ նշանակում է նաև դժվարություն ունենալ, էնքան դժվար ա, ոնց որ ծովը խմես, իսկ որ կարդում ես, լինում ա՝ «խմել դառնություն»:

— Ո՞ր գարեջրից կխմես, սա ամենադառն ա, – հարցնում է Ռաֆայելը: – Հա՛, իհարկե, ամենադառը:

Չէ՛, բառախաղը ես չեմ բացատրում, իմ ֆրանսերենը *անքուլե, բեզե, բոբու և մերսի* բառերից էն կողմ դեռ չէր անցել, հա՛, մեկ էլ՝ *լուե*: Բացատրում ա եվան, Երևանից եկել Քվեբեկ, քվեբեկցիներին ֆրանսերեն է սովորեցնում:

— Ահա սովետական դպրոցը, – ասաց Լյուդմիլան, հենց իմացավ, որ եվան ֆրանսերենի ուսուցիչ է, – ահա թե ինչպես էր լեզու սովորեցնում, որ Հայաստանից եկել, Քվեբեկում ֆրանսերեն եք դասավանդում:

— Բայց ես Սովետից հետո եմ սովորել:

— Նշանակություն չունի, նույն շկոլան է:

Եվան ժպտաց, չէ՛, էլ չասեց, որ նույն շկոլան չէ, Գյումրիի բիլենգ ֆրանսիական դպրոցը ֆինանսավորում էր ֆրանսիական դեսպանատունը, նույն առարկան առավոտ՝ հայերեն, երեկոյան ֆրանսերեն էին անցնում: Ինչ-որ պահից էլ չֆինանսավորեցին, որից հետո Գյումրին էլ չի տալիս աշխարհին ֆրանսերեն սովորեցնող մասնագետներ:

Իսկ Սովետում բիլենգ դպրոցների թեման խոսակցությունից էն կողմ չանցավ:

Բիլենգի մասին հորիցս եմ լսել: Սովետում 80-ականներին էր, խոսակցություն կար, որ ուզում են բիլենգ դպրոցներ բացել՝ հայերեն, ռուսերեն: Հայրս պայքարում էր բիլենգի դեմ, թե բիլենգը մեջ են գցել, որ քողարկված ձևով ռուսերենը գրավի հայերենի տեղը: Մի ճապոնացի գիտնական էր հայտնաբերել Ցունոդան, որ ապացուցում էր, թե երեխայի ուղեղն արդյունավետ է ձևավորվում մի մայրենի լեզվի հիման վրա, որ երկու լեզվի դեպքում հիմարանում են: Չգիտեմ՝ ճիշտ է, թե սուտ: Մասնագետներից լսել եմ, որ երեխան կարող է հանգիստ երկու մայրենիով մեծանալ: Հորս էլ այնքան երեխաների մտավոր կարողությունները չէին անհանգստացնում, այլ որ հայերենի կողքը երկրորդ մայրենի լեզուն ռուսերենն էր լինելու, և հետզհետե հայերենը դուրս էր մղելու. ուզում էր վախեցնել, թե տեսեք՝ եթե երկու մայրենիով մեծացնեք, երեխային վնաս կլինի: Մի շրջան հորս նյութերում հա հանդիպում էիր՝ «ինչպես հայտնաբերել է ճապոնացի գիտնական Ցունոդան», մինչև Սովետը փլվեց, ու օրենք հանեցին, որով արգելվում էր Հայաստանի՝ ազգությամբ հայ քաղաքացիներին երեխաներին օտար դպրոց տալ: Գյումրիի բիլենգ դպրոցն արդյոք լեզվի մասին օրենքի խախտո՞ւմ էր:

Ես էլ էնպես էի հորս հավատում, որ ուրիշ լեզու չսովորեցի: Որ մի քիչ մեծացա, զգացի՝ հակառակն ա, մենակ հայերենով մի քիչ հիմար եմ մնում, դպրոցի ռուսերենս էնքան էր, որ կատարելագործել կլիներ, եվգենյա Շամիրովնան լավ հիմքեր էր դրել: Տասներորդ դասարանո՞ւմ էի, թե՞ առաջին կուրսում սկսեցի ռուսերեն գրքեր կարդալ: Ո՞ր գրքից սկսեմ: Իհարկե, Դոստոևսկի: Նրա երեք գլխավոր վեպերը հայերեն կարդացել էի: Իզուր, մի քիչ սպասեի՝ գլխի ընկնեի, որ ռուսերեն իմանալս կարևոր է, ռուսերեն կկարդայի: Վերընթերցեի՞: Չեղավ, նույն գիրքը երկու անգամ կարդալու հաճույքը չեմ հասկացել: Կամ էլ հասկացել եմ, բայց մտածել՝ հենա, տեղը ուրիշ գիրք կարդամ, մեկս երկու կդառնա: Ուրեմն, Դոստոևսկուց չկարդացած վեպ վերցնեմ, ու ռուսերեն առաջին կարդացած գիրքս եղավ «Униженные и оскорбленные» վեպը: Հաջո՞րդը: Չեմ հիշում: Հետզհետե ռուսերենս հասցրի էնտեղ, որ լավ ա, Լյուդմիլային կարում եմ բացատրել, թե անկախությունը երբեմնի բարեկեցիկ ապրող մարդկանց նվաստացրել ու վիրավորել է, Հայաստանը թշվառության է հասցրել, տարեկան բնակչության մեկ-երկու տոկոսը երկրից փախչում է:

«Արևմտյան պատմաբանները 1917 թվի հեղափոխության մեջ աշխատավորների դերը շատ են նվազեցնում՝ հաճախ ներկայացնելով նրանց անգիտակից զանգված, տարերք, որը բուլշևիկներն օգտագործեցին իրենց շահերի համար: Իսկ սովետական պատմաբաններն էլ կրկին իջեցնում են աշխատավորների դերը՝ ընդգծելու կուսակցության առաջատար դերը»:

2017-ի դեկտեմբերն է, Մոնրեալ: Լատինական թաղամասում՝ Սեն Դենի փողոցիում՝ *L'amère à boire* փաբում, հասցնում ենք անկյունում ազատ սեղան գտնել երեքս՝ ես, Ռաֆայելը, Եվան: Արագ լցվող սրահի տարբեր կողմերից ռուսերեն խոսքը համարյա հայերենի չափ հարազատ է հնչում. «Պետերբուրգ», «բանվորներ», «ռուսական հեղափոխություններ» բառերը «Դառը ծով» են բերել Սովետոն ինչ-որ ամենայնուհետև ունեցող մոնրեալցիների:

— Տե՛ս, հաստատ ռուս կլինի, – ցույց ա տալիս Եվան Մանդելի հետ զրուցող կնոջը:

— Հա՛, չգիտեմ՝ ռուս ա, թե՛ չէ, բայց հաստատ նախկին Սովետից ա:

Ու մեկ էլ Մանդելը հայացքը պտտեցրեց փաբում ու կանգնեցրեց մեզ վրա: Ծանոթացեք, նրանք Հայաստանից են, ռուսերեն կխոսեք: Իսկապես, Լյուդմիլա: Կողքը բոյով, փողկապով մարդ էր, բայց կարծես չներկայացրեց էլ, ռուսերեն որ չգիտի, էլ խի ծանոթանաս:

— Վահան, խնդրեմ, նստե՛ք:

Джйотиш, Северо-Индийская (алмазная) натальная карта\*.

Вахан. Дата, время и место рождения: 10.05.1964, 17:44, Ереван.

— Եվա:

— Վաղո՞ւց եք Կանադայում:

— Չէ՛, ես՝ մի ինը ամիս, Եվան՝ մեկուկես տարի:

— Իսկ ի՞նչ եք անում:

— Ես՝ բան չէ, եթե գործ կարելի է անվանել, ուրեմն, էստեղից խմբագրում եմ հայերեն գրական կայք, «Ինքնագիր» է կոչվում՝ [inknagir.org](http://inknagir.org):

Джйотиш: “Они могут работать в сфере информации, из них получаются неплохие программисты, журналисты, писатели и менеджеры. В любом случае их работа не должна быть связана с однообразной деятельностью”.

— Ի՞նչ ուղղվածություն ունի:

\* Զիոտիշ, վեդայական աստղագուշակություն:

— Այսի՞նքն:

— Ձախ, թե՛ աջ:

Ըրըը՛, ոչ ոք չէր հարցրել «Ինքնագրի» դիրքորոշման մասին, մենք էլ չէինք մտածել, երևի որ Հայաստանում մամուլը ձախ ու աջով չի որոշվում:

Ե՞րբ սկսեցի հասկանալ, որ ինքս ձախ պիտի լինեմ. Սովետում, մեր ընտանիքում ձախը սրիկա, ավանտյուրիստ, քանդարար, արյունարբու էր կամ էլ ծաղրի առարկա: Մենք երազում էինք Արևմուտք ու արևմտյան ազատությունը. մարդ ծնվում է ազատ, անհատի ազատությունը ամեն ինչից վեր է, անձնական շահն է տնտեսության մղիչ ուժը, խի՞ Սովետում խանութները դատարկ են, ապրանք չկա, որովհետև անձնական շահ չկա, որ արտադրեն, եկամուտ ունենան, իսկ ապրանքի որակն էլ բարձրացնում է մրցակցությունը, տեսնում ես՝ քո ապրանքը լավ չի վաճառվում, մրցակցի ապրանքն են առնում, որակը բարձրացնում ես, որ քոնը լավ վաճառվի: Ազատ շուկա, մրցակցությունը խթանում է արտադրության որակն ու քանակը: Տե՛ս, արտասահմանում մտնես խանութ՝ «չկա» բառը չկա, էս ի՞նչ է էս քյամբախը, խանութները դատարկ-դատարկ, ոչ ոք շահագրգռված չէ նորմալ ապրանք արտադրել:

Ասում է՝ ախպարը նամակ է գրում քրոջը արտասահման՝ խանութները դատարկ-դատարկ են, մտնում ես, բան չկա առնելու: ԿԳԲ-ն նամակը կարդում է, կանչում, զգուշացնում՝ տես, որ էլի գրես, կնստեցնենք: Մի ամիս համբերում, էլի է գրում՝ խանութները դատարկ-դատարկ են, էլի կանչում են ԿԳԲ, ԿԳԲ-չնիկը վախեցնելու համար ատրճանակը հանում, գլխին ա պահում՝ էլի գրես, կխփենք: Էս մարդը ջղային-ջղային ասում է՝ էս ինձ խաբեցիք, բերիք էս քյամբախը, էս կյա՞նք է. գրելու եմ, խփում եք՝ խփեք: ԿԳԲ-չնիկը, որ ավելի վախեցնի, դատարկ ատրճանակը չխկացնում ա: «Փամփուշտ ա՛լ չունիք»,– խնդում ա ախպարը:

Սովետն ու արտասահմանը մենք համեմատելու ավելի շատ հնարավորություններ ունեինք: Արտասահմանում՝ «արևմտյան դրախտում», լիքը բարեկամներ ունեինք. մամայիս ամբողջ գերդաստանը ԱՄՆ-ում ու Ֆրանսիայում էր, քեռին՝ Վազգեն Անդրեասյանը, ընտանիքով՝ զավակներով ու թոռներով՝ Փարիզում, տատիս հորեղբոր գերդաստանը՝ Անդրեասյանների մյուս ճյուղը՝ ԱՄՆ-ում՝ Անդրանիկ ու Արտավազը. Անդրեասյան եղբայրները, երկուսն էլ՝ գրող: Համ էլ հորս Սփյուռքում գիտեին, հայրենասեր է, հայոց լեզվի պաշտպան, դասական ուղղագրության կողմնակից,





Հյուրեր արտասահմանից մեր տանը. Նյու Յորքից գրող, թարգմանիչ Ջաք-Արտավազը Անդրեասյանը կնոջ հետ:

ու սփյուռքահայ շատ մտավորականներ որ գալիս էին Երևան, հորս էլ էին հանդիպում:

Արտասահմանից որ հյուրեր էին գալիս մեր տուն՝ Լիբանանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, նվերներ էին բերում՝ գրիչներ, ծամոններ, իհարկե, հիմնականում՝ շորեր, հաճախ՝ հագած, բայց հոգ չէր, գույնզգույն իմպրտնի շորերի համար ուշքներս գնում էր: Սպասում էի՝ երբ են հյուրերը գնալու, որ գրցվեմ, բացեմ տոպրակները: Ո՞վ էր, դեղին, նեղ վելվետ էր բերել, վրայովս չէր լինում, նեղ-նեղ, բայց զոռով հագնում էի, ձվերս ցցվում էին:

Բա ի՞նչ շալվարից էիր ուզում ազատվել, որ խցկվում էիր քո չափսից նեղ վելվետի մեջ: Խանութից շալվար ո՞վ էր առնում: Կտորի խանութից շալվարի կտորն առնում էի, տանում դերձակի մոտ, 15 ռուբլիով շալվար կարել տալիս: Մեր թաղերում էր ապրում, բիճա մարդ էր, հիանալի կարում էր, մեջը՝ հանգիստ, ազատ: Հիմա են հասկանում, որ հազար վելվետ արժեր:

Իսկ ծամո՞նը: Չէ՛, երևանում վաճառվող ծամոնը մի բան չէր, անշուրփաթեթով, երկու րոպե ծամում ես, համը կորչում, ու դառնում էր ինչ-որ ռեզին: Ամերիկյան ծամոնն էր ծամոնը, արտասահմանյան ապրանքի խորհրդանիշն էր:

Մամաս հայաթի տղաներին ասել էր, որ ով տեսնի՝ փողոցի կատուներին ու շներին հալածում են, չթողնի, փրկի կենդանիներին, ծամոն նվեր կըստանա: Մեր հայաթի Հաջին համոզեց, որ մամայիս խաբեմ, բարձրացանք մեր տուն, մամաս դուռը բացեց: «Մամ, Սաքոն նոր մի կատու փրկեց»: «Հա՛, ապրես, Սաքո՛ ջան, սպասի»,– ու գնաց, ծամոն բերեց, տվեց: Ու տենց՝ երկու անգամ: Ծամոն Wrigley's Spearmint՝ սովետահայ երեխայի երազանք:

Ամենալավ նվեր բերողը Սան Ֆրանցիսկոյից Ալբերտ Նալբանդյանն էր. նրա նվերները՝ բոլորը նոր, ոչ մի օգտագործած իր: Հատուկ Հայաստան էր գալիս, որ մտավորականներին նվերներ բաժանի: Կարծեմ մի տարի էլ Օրբելյանի ամբողջ նվագախմբի համար երաժշտական գործիքներ բերեց: Ժպտադեմ, բեղերով, իսկը Չարլի Չապլինը, միայն ոչ թե տխուր, այլ ուրախ:

Ալբերտ Նալբանդյանի մահախոսականն ասում է.

His love of all things Armenian led him to make nearly 20 yearly trips to the USSR during the cold war years, as he took medical supplies and gifts to those in need year after year<sup>1</sup>.

Նալբանդյանը, նվերներ բերելով, հակասովետական արա՛րք էր անում, թե՞ բարեգործություն: Սովետի փլուզումից հետո Ալբերտ Նալբանդյանն ապրեց ևս քսանյոթ տարի, մահացավ 2017-ին՝ իննսունհինգ տարեկանում, բայց այլևս նվերներ չէր բերում, թեև իրական սառը օրերը Սովետի փլվելուց հետո սկսվեցին: Ջեռուցումը ավերվեց, ու սկսեցին սառը ձմեռները, որ տանդ մեջ ցրտից ոչ մի տեղ չէիր կարող պատսպարվել, նավթի վառարանների դիմաց նստում ու փորձում էիր մի քիչ ջերմություն կորզել: Իսկական ընչազուրկները, որ նույնիսկ շոր չունեն՝ վրաները գցեն, անկախ Հայաստանում են:

Մոտ վաթսուն խուլեր հունվարի 25-ին գնացել էին աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ խնդրելու, որ բարձրացնեն իրենց հաշմանդամության թոշակները: Առիթը ջրի սակագների սպասվող թանկացման լուրն էր:

Երևանի «Զրմուղ» ՓԲԸ-ն ջրի սակագնի կրկնակի բարձրացման հայտ է ներկայացրել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Այժմ մեկ

խորանարդ մետր ջրի սակագինը 90,36 դրամ է (մոտ 20 սենթ): Եթե հայտն ամբողջությամբ բավարարվի, կդառնա 165,58 դրամ:

Միայն հաշմանդամության թոշակով ապրող խուլերը հազիվ են վճարում կոմունալ ծախսերը: Զրի թանկացումը նոր հարված է նրանց համար:

41-ամյա Էմմա Օհանյանը և նրա ամուսինը խուլուհամր են: Նրանց տուն ամսական մտնում է 15,500 դրամ (մոտ 33 դոլար), որով պետք է հոգան կոմունալ ծախսերը և սնունդ գնեն: Էմման ստանում է 5000 դրամ հաշմանդամության թոշակ, ամուսինը՝ 4500: Որդին և դուստրը, որ խուլ չեն, գործազուրկ են: Որդին վերջերս բանակից զորացրվել է հաշմանդամ դարձած (մի ձեռքը դժվարությամբ է շարժում) ու ստանում է 6000 դրամ հաշմանդամության թոշակ:

Երեքսենյականոց բնակարանի միայն մեկ սենյակն են կարողանում էլեկտրասալիկով տաքացնել: Անցած ամսվա էլեկտրականության վարձը կազմել է 12,000 հազար դրամ, որից կարողացել են վճարել միայն 7000-ը: Ընտանիքը կիսաքաղց է:

Ապրիլի 1-ից կենսաթոշակները կբարձրանան 1000 դրամով (մոտ 2 դոլար), որը չի կարող փոխհատուցել անընդհատ բարձրացող կոմունալ վարձերը (թոշակների բարձրացումը Հայաստանում կապված չէ գների աճի կամ սղաճի հետ, պայմանավորված է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով):

Խուլերի բողոքը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում միայն լսում են ու որևէ հույս չեն տալիս, թե թոշակները կբարձրանան:

Այս տարվա բյուջեով նախատեսված է խոցելի խմբերին (որոնց մեջ մտնում են հաշմանդամները) աշխատանքով ապահովելու համար ծախսել 259 միլիոն դրամ: Բացի այդ՝ Սոցիալական ապահովագրության հիմնադրամը 21.5 միլիոն դրամ է հատկացնելու, որ գործատուները հաշմանդամներին աշխատանքի ընդունեն: Մեխանիզմը, թե ինչպես է ծախսվելու այդ գումարը, դեռ մշակված չէ: Նախարարության զբաղվածության բաժնի վարիչ Արթուր Սարգսյանն ասում է, որ հավանաբար մեխանիզմը կլինի այսպիսին. աշխատանքի ընդունված հաշմանդամի աշխատավարձին հավելյալ 13,000 դրամ կհատկացվի բյուջեից:

Սակայն խուլերին այս ծրագրերը չեն վերաբերում: Չորս տարի առաջ կառավարությունը նրանց հաշմանդամության կարգը փոխել է. երրորդից՝ աշխատունակ հաշմանդամությունից, դարձրել է երկրորդ՝ անաշխատունակ:

Խորհրդային տարիներին խուլերն աշխատունակ էին ու մյուս քաղաքացիներին հավասար աշխատում էին: Հատուկ խուլերի համար Հայաստանում կար հագուստ և կոշիկ արտադրող 6 ձեռնարկություն, որտեղ 1000 աշխատողներից

700-ը խուլ էին (ըստ կարգի՝ նման ձեռնարկությունների աշխատողների 30 տոկոսը պիտի լիներ ոչ խուլ):

«Պետությանը ոչ մի հոգս չենք պատճառել, դեռ մենք ենք օգնել պետությանը, – ասում է «Խուլերի միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Ժորա Վարազյանը: – Մենք բարեգործության կարիք չենք ունեցել, ընդհակառակը՝ մենք ենք բարեգործություն արել»: Խուլերն են կառուցել Երևանի քիթ-կոկորդի հիվանդանոցը: Վարազյանն ասում է, որ վերջերս խուլերից մեկին անվճար բուժելու համար այդ հիվանդանոցին նամակ է գրել, սակայն բժիշկները մերժել են և փող ուզել:

Էմման գործող բանվորուհի է աշխատել Երևանի խուլ-համրերի ֆաբրիկայում 1980–1991 թվականներին: Ամուսինը նույնպես աշխատել է: Խորհրդային Միության փլուզման հետևանքով այդ ձեռնարկությունները փակվեցին, և բոլոր խուլերը կորցրին աշխատանքը: Էմման իր մասնագիտությունն այժմ օգտագործում է տանը պարկի կտորից պայուսակներ կարելով, իսկ ամուսինը դրանք վաճառում է շուկայում: Եկամուտը բավականացնում է փակելու էլեկտրականության վարձի մի մասը: Ի տարբերություն մյուս քաղաքացիների, որոնք հույս ունեն, թե երբևէ աշխատանք կունենան, խուլերն աշխատանքը կորցրին առհավետ:

Այժմ եթե նույնիսկ նրանք աշխատունակ համարվեն, ոչ մի գործատու խուլի գործի չի ընդունի, քանի որ չի կարող նրա հետ հաղորդակցվել:

Խուլերի վեց ձեռնարկությունները չեն փակվել և դեռևս պատկանում են «Խուլերի միավորմանը» (միայն Երևանի ֆաբրիկայի հինգհարկանի շենքի առաջին երկու հարկերն են վաճառվել): Սակայն որևէ հեռանկար չկա, որ դրանք կրկին կաշխատեն:

«Խուլերին դարձրին անաշխատունակ, քանի որ իշխանություններն այդ ձեռնարկություններն աշխատեցնելու մտադրություն չունեն, – ասում է Վարազյանը: – Գոնե վարչապետը մեզ ընդունելու մի տասնհինգ րոպեով, բացատրեինք, որ մենք կարող ենք աշխատել, մի ծրագիր մշակվի, կամ պարտք տան, որ ձեռնարկությունները վերագործարկվեն»:

Նա վստահ է, որ կառավարությունն իրենց աշխատանքի խնդրով չի զբաղվում, քանի որ նրանց մեջ չկա հաշմանդամ, որ իրենց վիճակը հասկանա: «Սոցապ նախարարի ի՞նչն է պակաս. ոտը՝ տեղը, ձեռը՝ տեղը, ամեն ինչ՝ տեղը: Մարդ պիտի հաշմանդամ լինի, որ մեզ համար ցավի», – ասում է Վարազյանը և հիշում, որ խորհրդային տարիներին սոցապ երկու նախարար հաշմանդամ են եղել:

Հայաստանում 3500 խուլ կա: Նրանց մեջ մինչև 9.000 դրամ թոշակ ստացողներ կան, ինչը պայմանավորված է նրանց աշխատանքային ստաժով (միջին կենսաթոշակը 7.800 դրամ է): Սակայն ավելի երիտասարդները, որ ծնվել են 1970 թվականից հետո և աշխատանքային ստաժ ունենալու հնարավորություն չեն ունեցել, ստանում են 3.000 դրամ, որ ամենացածր թոշակն է<sup>2</sup>:

Սովետը արդեն տասնյոթ տարի է՝ չկա, տեղը՝ արևմտյան ազատությունը, Մերգեյանի գիտաշխատող ու Մալաթիայի բազարի բուֆետչիկ բուրժուա դառան, մնացածը՝ թշվառ ու աղքատ Հայաստան: Խանութները՝ լիքը, ճիշտ է, հիմնականում՝ էն երկրի ապրանքը, որը մեր նախնիներին կոտորել է, բայց դե Սովետ չէ, լիքը ապրանք: Է՞ս էր երազանքդ, գնա, ջուկի, հագովդ գոի դեղին վելվետը, հագի, կալբասը առ ու գխկտվի:

Սովետում խանութը դատարկ էր, բայց սոված ու տկլոր մարդ չկար: Դատարկը՝ դատարկ, հասկացանք, բայց էնպես չէր, որ ոչ մի մթերք չկար: Կարևոր ուտելիքները կային՝ ձեթ, շաքար ու շաքարավազ, ձու, հաց, բրինձ, գրեչկա, կաթ, թթվասեր, կաթնաշոռ, մածուն, լիմոնադ, ջերմուկ, պիվա, օղի, կոնյակ: Հերիք չէ՞ երջանիկ լինելու համար: Միս չկար, բայց կարայիր շուկայից կիլոգրամը հինգ ռուբլիով առնեիր, հավը մեկ կար, մեկ չկար, էլի որ շատ ուզեիր, շուկայից մի քիչ թանկով կառնեիր, կարագն էր քչություն անում. վերջին տարիներին կտրոնով էր կարագը: Ինչը որ չկար, «տակից» էին առնում, այսինքն գործակատարի սեղանին կամ ցուցափեղկում չկա, սեղանի տակն է, մի քիչ ավել գումար տուր, ուզածդ ապրանքը առ:

Հիմա՝ առատ խանութներ, բայց լեզուն կախ գցած աղքատների զանգված: «Ճիշտ» ազատականը կպատասխանի՝ մենք պետք է այնպես անենք, որ ոչ թե բոլորը աղքատ դառնան, այլ որ բոլորը հարստանան: Իսկ թե ինչպե՞ս, պարզ չէ՞. շահագործումը բարձրացնել այն մակարդակի, որ շահագործվողը կյանքից դժգոհություն չունենա: Կոպիտ ասած՝ Լֆիկ Սամոն «Երևան Սսիթի»-ի գործակատարին ոչ թե առանց գրանցելու ամսական 80-100 հազար դրամ տա, այլ գրանցելով՝ 500,000 դրամ: Բայց չի անում: Բա խի քսանհինգ տարի է՝ աշխատավորի կյանքում ոչ մի բան չի փոխվել: Բայց ո՞վ պիտի փոխեր, ո՞վ Լֆիկին պիտի ստիպեր, որ գործակատարի աշխատավարձը բարձրացնի, մտավորակա՞նը, քաղաքական գործի՞չը: Չէ մի չէ: Խեղդվողին փրկելու գործը խեղդվողինն է, կամ եղունգ ունես՝ գլուխդ քորի. սրանք են ազատականության ձմարտությունները: